600.0086.26.03.25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2025 թվականի №86-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №523-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» № 523-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ԷԲՑ կանոնների 139-րդ կետի 1-ին ենթակետում և 140-րդ կետում «իրավունքի» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ բնակության իրավունքի)» բառերը:
2) ԷԲՑ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 139.1-րդ կետով.

«139.1. ԷԲՑ կանոնների 139-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում տվյալ սպառման համակարգի տեղակայման տարածքի ընդհանուր սեփականատեր հանդիսացող անձի կողմից առարկություն ներկայացվելու պարագայում, Բաշխողը պարտավոր է ձեռնպահ մնալ էլեկտրամատակարարման դադարեցմանն ուղղված գործողություններ կատարելուց, իսկ դադարեցված լինելու դեպքում վերականգնել էլեկտրամատակարարումը՝ այդ մասին ծանուցելով Սպառողին:»:

3) ԷԲՑ կանոնների 179-րդ կետի 1-ին ենթակետից հանել «, և Հանձնաժողովի գրավոր համաձայնությամբ այլ դեպքերում՝ առավելագույնը մինչև մեկ տարի ժամկետով» բառերը, 6-րդ ենթակետի երկրորդ նախադասության վերջում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ ենթակետով.

«7) այլ դեպքում՝ Հանձնաժողովի գրավոր համաձայնությամբ:»:

4) ԷԲՑ կանոնների 180-րդ կետում կետում «1-ին և 5-րդ» բառերը փոխարինել «1-ին, 5-րդ և 7-րդ» բառերով:

5) ԷԲՑ կանոնների 229-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«229. Պայմանագրով (Հաշվառման քարտում, ԷՄՇ մասնակցի պրոֆիլում) ամրագրված հզորության փոփոխության դեպքում, եթե չի փոխվում լարման մակարդակը, և եթե Միացման փոփոխությունը իրականացվելու է Միացման պայմանագրով, Միացման վճար հաշվարկելիս Միացման վճարի հաստատուն ծախսերի մեծությունը ($Վ_հ$) չի հաշվարկվում, և Միացման վճարը հաշվվում է պահանջվող հզորության և առկա հզորության տարբերության չափը բազմապատկելով փոփոխական ծախսերի մեծության ($Վ_փ$) արժեքին: Տեխնիկական պայմաններով Միացման փոփոխության դեպքում Միացման վճար չի հաշվարկվում, սակայն Դիմող անձը փոխհատուցում է անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացման կամ նորերի ստեղծման Բաշխողի փաստացի ծախսերը այն դեպքերում, երբ իր հզորության ավելացմամբ պայմանավորված անհրաժեշտ է լինում կատարել նման աշխատանքներ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
26 մարտի 2025թ.